ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**(19 օգոստոսի, 2023 թ.)**

*Խոր անհանգստությամբ տեղեկացանք, որ Ադրբեջանը «հակաահաբեկչական գործողության» իրականացման կեղծ պատճառաբանություններով ռազմական լայնածավալ գործողություններ է սկսել Արցախի նկատմամբ, հրետակոծությունների ենթարկելով Արցախի խաղաղ բնակավայրերը, թիրախավորելով մայրաքաղաք Ստեփանակերտը։*

*Խստորեն դատապարտում ենք Ադրբեջանի հերթական թշնամական այս գործողությունը եւ կոչ անում միջազգային բոլոր կառույցներին զսպել Ադրբեջանի իշխանություններին եւ համարժեքորեն արձագանքել Ադրբեջանի ցեղասպան գործողություններին։*